ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ԿԱԹՆԱՂԲՅՈՒՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետություն Լոռու մարզ
Կաթնաղբյուր համայնք, 9-րդ փողոց 1-ին փակուղի 2-րդ շենք
Հեռախոս 093960214 , էլ. Փոստ katnaghbyur.lori@mta.gov.am

<< 09 >><< 02 >> 2017թ

ՀՀ Լոռու մարզպետ
Պարոն Ա. Նալբանդյանին

Հարգելի պարոն Նալբանդյան
Ձեզ եմ ներկայացնում Կաթնաղբյուր համայնքի ավագանու 03.02.2017թ. թիվ 3 և թիվ 4 որոշումները:

Առդիր 7 թերթ:

Համայնքի ղեկավար՝ _____ Ա. Սավթալյան

Կատարող՝ Ս.Սարգսյան
Հեռ. +/374/93989489

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ԿԱԹՆԱՂԲՅՈՒՐ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզ
Կաթնաղբյուր համայնք, 9-րդ փողոց 1-ին [illegible] 2-րդ շենք,
Հեռախոս 093960214, էլ. փոստ Katnaghb[illegible]a.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ թիվ 4

<< 03 >> << 02 >> 2017 թ

ԿԱԹՆԱՂԲՅՈՒՐ ՀԱՄԱՅՆՔԻ [illegible]ՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ԵՎ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ:

Ղեկավարվելով <<Համայնքային Ծառայության Մասին>> ՀՀ օրենքի 13-րդ հոդվածով և <<Իրավական [illegible] Մասին>> ՀՀ օրենքի 72-րդ հոդվածով՝

Կաթնաղբյու[illegible]ի ավագանին որոշում է.

1. Հաստատել Կաթնաղբյուր համ[illegible]ի համայնքային ծառայության մրցութային և ատեստավորման հանձնաժողո[illegible] կազմը՝ հինգ ավագանու անդամներից ընդգրկելով երեք ավագանու անդամներ՝ [illegible] հավելվածի:
2. Ուժը կորցրած ճանաչել Կաթնա[illegible]ամայնքի ավագանու 10.10.2013թ.-ի թիվ 25 որոշումը
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում [illegible]ման հաջորդ օրվանից:

հ/հ	Ավագանու անդամներ	[illegible]ում	դեմ	ձեռնպահ
1	Հակոբյան Մակար			
2	Հակոբյան Սմբատ			
3	Հակոբյան Վրեժ			
4	Սավթալյան Կարապետ			
5	Սարգսյան Խաչատուր			

Համայնքի ղեկավար՝ _____ Ա. Սավթալյան

Հավելված
Կաթնաղբյուր համայնքի ավագանու
03.02.17թ-ի թիվ 4 որոշման

Կաթնաղբյուր համայնքի համայնքային ծառայության մրցութային և ատեստավորման հանձնաժողովի կազմի մասին:

1. Կարապետ Սավթալյան՝ հանձնաժողովի անդամ /ավագանու անդամ/
2. Մակար Հակոբյան՝ հանձնաժողովի անդամ /ավագանու անդամ/
3. Խաչատուր Սարգսյան՝ հանձնաժողովի անդամ /ավագանու անդամ/

Կաթնաղբյուր համայնքի ղեկավար՝ _____ Ա. Սավթալյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԿԱԹՆԱՂԲՅՈՒՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Կաթնաղբյուր համայնք, 9-րդ փողոց 1-ին փակուղի 2-րդ շենք,
Հեռախոս 093960214, էլ. փոստ Katnaghbyur.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ թիվ 3-Ն

<< 03 >> << դեկտեմբեր >> 2017թ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԿԱԹՆԱՂԲՅՈՒՐ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ, ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ կետով, «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ, 9-րդ, 10-րդ, 11-րդ, 12-րդ, 13-րդ, 14-րդ հոդվածներով և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 56-րդ հոդվածի 2-րդ մասով, 72-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի գ) ենթակետով

Կաթնաղբյուր համայնքի ավագանին որոշում է.

1. Սահմանել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Կաթնաղբյուր գյուղական համայնքում 2017 թվականի համար տեղական տուրքերի և վճարների տեսակները, դրույքաչափերը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումը օրենքով սահմանված կարգով ներկայացնել Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն պետական իրավական փորձաքննություն անցկացնելու համար:
3. Ուժը կորցրած ճանաչել Կաթնաղբյուր համայնքի ավագանու 2016 թվականի նոյեմբերի 24-ի «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Կաթնաղբյուր գյուղական համայնքում 2017 թվականի համար տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը սահմանելու մասին» N 25-Ն և 2017թ-ի հունվարի 16-ի թիվ 1-Ն որոշումները :
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

h/h	Ավագանու անդամներ	կողմ	դեմ	ձեռնպահ
1	Հակոբյան Մակար			
2	Հակոբյան Սմբատ			
3	Հակոբյան Վրեժ			
4	Սավթալյան Կարապետ			
5	Սարգսյան Խաչատուր			

Համայնքի ղեկավար՝ _____ Ա. Սավթալյան

Հավելված՝
Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Կաթնաղբյուր համայնքի ավագանու
2017 թվականի Փետրվարի 3-ի թիվ 3-Ն որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԿԱԹՆԱՂԲՅՈՒՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ, ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐ

1) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ համայնքի վարչական տարածքում նոր շենքերի, շինությունների և ոչ հիմնական շինությունների շինարարության (տեղադրման) (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջող դեպքերի) թույլտվության համար.

ա. հիմնական շենքերի և շինությունների համար՝

մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության շենքերի և շինությունների համար՝ **յոթ հազար հինգ հարյուր դրամ**

բ. սույն կետի «ա» ենթակետով չնախատեսված շենքերի և շինությունների համար՝

- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ **տասնհինգ հազար դրամ,**
- 500-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ **քսանհինգ հազար դրամ**
- 1000-ից մինչև 3000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ **հիսուն հազար դրամ,**
- 3000-ից և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ **հիսուն հազար դրամ.**

գ. ոչ հիմնական շենքերի և շինությունների համար՝

- մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ **մեկ հազար հինգ հարյուր դրամ,**
- 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ **երկու հազար հինգ հարյուր** դրամ.

2) համայնքի վարչական տարածքում գոյություն ունեցող շենքերի և շինությունների վերակառուցման, վերականգնման, ուժեղացման, արդիականացման և բարեկարգման աշխատանքների (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվության համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝

ա. չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն՝ **մեկ հազար հինգ հարյուր դրամ,**

բ. բացի շենքերի և շինությունների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի տրամաչափային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, և, բացի սույն կետի «ա» ենթակետով սահմանված դրույքաչափից, կիրառվում են նաև նոր շինարարության համար սույն հավելվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված նորմերը և դրույքաչափերը՝ շենքերի և շինությունների ընդհանուր մակերեսի ավելացման կամ շենքերի գործառական նշանակության փոփոխության մասով,

գ. նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) շինարարություն կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, սույն օրենքի իմաստով, այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ

[illegible]նոր շինարարության համար սույն հավելվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված նորմերը և [illegible]փերը.

[illegible]համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների և քաղաքաշինական այլ օբյեկտների [illegible]դման (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված քանդման թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվության համար՝ **երկու հազար հինգ հարյուր դրամ.**

4) համայնքի վարչական տարածքում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ **մեկ հարյուր հազար դրամ.**

5) համայնքի վարչական տարածքում գտնվող խանութներում և կրպակներում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի, մանրածախ առևտրի կետերում կամ ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման և նորոգման ծառայության օբյեկտներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ **երեսուն հազար դրամ.**

6) համայնքի վարչական տարածքում թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի որոշակի վայրում մանրածախ առք ու վաճառք իրականացնելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ **քսան հինգ հազար դրամ.**

7) համայնքի վարչական տարածքում ոգելից և ալկոհոլային խմիչքների և (կամ) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝

ա. ոգելից և ալկոհոլային խմիչքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ **երեք հազար դրամ,**
- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ **երեք հազար հինգ հարյուր դրամ**
- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ **չորս հազար դրամ**
- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ **վեց հազար երկու հարյուր հիսուն դրամ,**
- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ **տաս հազար դրամ,**
- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ **տասնհինգ հազար դրամ.**

բ. ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ **մեկ հազար հինգ հարյուր դրամ,**
- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ **երեք հազար հինգ հարյուր դրամ**
- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ **չորս հազար դրամ**
- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ **վեց հազար մեկ հարյուր դրամ**
- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ **յոթ հազար վեց հարյուր դրամ**
- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ **տասնհինգ հազար դրամ**

8) իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերին համայնքի վարչական տարածքում «Առևտրի և ծառայությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված՝ բացօթյա առևտրի կազմակերպման թույլտվության համար՝ յուրաքանչյուր օրվա համար՝ **մեկ հարյուր յոթանասուն հինգ դրամ՝** մեկ քառակուսի մետրի համար

9) համայնքի վարչական տարածքում առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտներին, խաղատներին և բաղնիքներին (սաունաներին) ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝

ա. առևտրի օբյեկտների համար՝ **տասներեք հազար յոթ հարյուր հիսուն դրամ,**

բ. հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար՝ **երեսունմեկ հազար երկու հարյուր հիսուն դրամ**

գ. բաղնիքների (սաունաների) համար՝ **մեկ հարյուր յոթանասունհինգ հազար**

դ. խաղատների համար՝ **երեք հարյուր յոթանասունհինգ հազար դրամ**

ե. շահումով խաղերի համար՝ **մեկ հարյուր ութսունյոթ հազար հինգ հարյուր դրամ**

զ. վիճակախաղերի համար՝ **վաթսուներկու հազար հինգ հարյուր դրամ**

[illegible]նքի վարչական տարածքում, համայնքային կանոններին համապատասխան՝ հանրային սննդի [illegible]պման և իրացման թույլտվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր եռամսյակի համար [illegible]ավում է՝

ա. հիմնական շինությունների ներսում՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ **մեկ հազար հինգ հարյուր դրամ**

- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար **երկու հազար դրամ,**

- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ երեք հազար երկու հարյուր դրամ,

- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ **հինգ հազար դրամ,**

- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ **յոթ հազար հինգ հարյուր դրամ**

- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ **տաս հազար դրամ**

բ. ոչ հիմնական շինությունների ներսում՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ **երեք հարյուր դրամ**

- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ **հինգ հարյուր դրամ,**

- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ **մեկ հազար դրամ,**

- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ **մեկ հազար հինգ հարյուր դրամ,**

- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ **երեք հազար դրամ,**

- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ **հինգ հազար դրամ**

11) ավագանու սահմանած կարգին ու պայմաններին համապատասխան՝ համայնքի վարչական տարածքում արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար, բացառությամբ միջպետական ու հանրապետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների օտարման շերտերում և պաշտպանական գոտիներում տեղադրվող գովազդների թույլտվությունների, յուրաքանչյուր ամիս մեկ քառակուսի մետրի համար՝

ա. ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ **մեկ հազար դրամ,**

բ. թունդ ալկոհոլային (սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ **մեկ հազար յոթ հարյուր հիսուն դրամ**

գ. սոցիալական գովազդի համար՝ զրո դրամ,

դ. այլ արտաքին գովազդի համար՝ **յոթ հարյուր հիսուն դրամ**

ե. դատարկ գովազդային վահանակների համար՝ համայնքի վարչական տարածքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի 25 %-ի չափով,

զ. եթե արտաքին գովազդ տարածող գովազդակիրը տեղաբաշխել և տարածել է իր կազմակերպության գովազդը՝ համայնքի վարչական տարածքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի 10 %-ի չափով.

12) Հայաստանի Հանրապետության համայնքների խորհրդանիշերը (զինանշան, անվանում և այլն), որպես օրենքով գրանցված ապրանքային նշան, ապրանքների արտադրության, աշխատանքների կատարման, ծառայությունների մատուցման գործընթացներում օգտագործելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ **հիսուն հազար դրամ.**

13) համայնքի վարչական տարածքում մարդատար-տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների՝ միկրոավտոբուսների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար՝ օրացուցային տարում յուրաքանչյուր մեքենայի համար՝ **հինգ հազար դրամ.**

14) համայնքի վարչական տարածքում քաղաքացիական հոգեհանգստի (հրաժեշտի) ծիսակատարության ծառայությունների իրականացման և (կամ) մատուցման թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ **երկու հարյուր հիսուն հազար դրամ.**

15) համայնքի վարչական տարածքում մասնավոր գերեզմանատան կազմակերպման և շահագործման թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝

[illegible]ից մինչև 5 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ **մեկ միլիոն երկու հարյուր հիսուն դրամ,**

[illegible] հա-ից մինչև 7 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ **երկու միլիոն հինգ հարյուր հազար դրամ,**

գ. 7 հա-ից մինչև 10 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ **երեք միլիոն հինգ հարյուր հազար դրամ,**

դ. 10 հա-ից ավել մակերես ունեցող գերեզմանատների համար՝ **հինգ միլիոն դրամ**

ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐ

1) համայնքի տարածքում շենքի կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար. 2000 դրամ

2) ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված շինարարության թույլտվություն պահանջող, բոլոր շինարարական աշխատանքներն իրականացնելուց հետո շենքերի և շինությունների (այդ թվում՝ դրանց վերակառուցումը, վերականգնումը, ուժեղացումը, արդիականացումը, ընդլայնումն ու բարեկարգումը) կառուցման ավարտը ավարտական ակտով փաստագրման ձևակերպման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար. 2000 դրամ

3) ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված աշխատանքներն ավարտելուց հետո շահագործման թույլտվության ձևակերպման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար. 2000 դրամ

4) համայնքի տնօրինության և օգտագործման ներքո գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքերում փաստաթղթերի (փաթեթի) նախապատրաստման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար. 2000 դրամ

5) համայնքի կողմից կազմակերպվող մրցույթների և աճուրդների մասնակցության համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար. 2000 դրամ

6) համայնքի վարչական տարածքում տոնավաճառներին (վերնիսաժներին) մասնակցելու համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար. 2000 դրամ

7) համայնքի կողմից աղբահանության վճար վճարողների համար աղբահանության աշխատանքները կազմակերպելու համար աղբահանության վճարը սահմանել՝

ա. կենցաղային աղբի համար՝ համայնքում անձնագրային հաշվառման կանոններով ըստ հասցեի հաշվառում ունեցող և (կամ) բնակվող յուրաքանչյուր բնակչի համար՝ ամսական 200 դրամ

բ. ոչ կենցաղային և խոշոր եզրաչափի աղբի համար՝

ըստ ծավալի՝ մեկ խորանարդ մետր աղբի համար՝ 2000 դրամ

8) համայնքի կողմից իրավաբանական անձանց կամ անհատ ձեռնարկատերերին շինարարական և խոշոր եզրաչափի աղբի հավաքման և փոխադրման, ինչպես նաև աղբահանության վճար վճարողներին շինարարական և խոշոր եզրաչափի աղբի ինքնուրույն հավաքման և փոխադրման թույլտվության համար աղբահանության վճարը սահմանել 7-րդ կետով սահմանված վճարի 20% չափով.

9) համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ տրամադրելու համար՝ մեկ փաստաթղթի համար՝ **հինգ հարյուր դրամ** փոխհատուցման վճար:

Աշխատակազմի քարտուղար՝ _____ Ս. Սարգսյան

(Անուն, ազգանուն)